Թ ՏԱՐԻ 2450 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 17 ԱՐԵՒ 4384 24 ՄԱՐՏ 1892 8 ՌԱՄԱԶԱՆ 1309 ԵՐԵՔՇԱԲԹԻ

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعلیه‌ده غلطه‌ده آره‌ولك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	դահեկան արծաթ	150
» »	Վեցամսեայ	» »	75
» »	Եռամսեայ	» »	40
Օտար երկիրներ	Տարեկան	ֆրանք	56
» »	Վեցամսեայ	»	28
Ընտիր թուղթի վրայ մասնաւոր տպագր.	Տարեկան	Օսմ. Ոսկի	2
Գաւառաց [illegible] ծախքի միօրինակ		Ղրուշ	50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 24/5 ԱՊՐԻԼ 1892

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ

Ազգային կացութիւն

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐ

Տփղիսի թերթերն, հայերէն և ռուսերէն, զորս վերջին երկու սուրհանդակները բերին մեզ, որոշ գաղափար կուտան այն պարագայից վրայ յորս կատարուած է մարտ 8 ի կիրակին Վրաստանի և Իմերէթի թեմին աշխարհական պատգամաւորի ընտրութիւնն։

Ինչպէս խմբագրականով մը բացատրեցինք արդէն, խնդիրն ո՛չ այնքան Ամենայն Հայոց Հայրապետի առաջիկայ ընտրութեան մէջ աշխարհական պատգամաւոր մը աւելի կամ նուազ լինելուն վրայ էր։ Խնդիրն հո՛ն էր որ այս եկեղեցական ընտրութիւն առիթ կ՚ընծայէր Ռուսիոյ Հայոց ամենէն զարգացեալ թեմին մէջ ազգային լրագրական և եկեղեցական տեսութեամբք երկու տարբեր դպրոցներու կամ կուսակցութիւններու բաղդատական ույժն իմանալու։ Արդէն ի մէջ բերինք ռուսերէն չեզոք թերթի մը՝ [illegible] նկարագրութիւնը մարտ 8 ի ընտրութեան վրայ, և Նոր Դարի ընդարձակ նկարագրութեան մէկ մասն։ Իր համառօտ ծանօթութեան մէջ Մշակ ալ նոյն իրողութիւններն հաղորդած էր։

Այսպիսի ժողովներ Ռուսիոյ մէջ յաճախ չկազմուելուն պատճառաւ, ժողովական այնպիսի հնարքներ կան որք Ռուսիոյ Հայոց մէջ թերեւս նորութիւն համարուին։ Բայց ուրիշ տեղեր ուր ժողովներ շատ անգամ կը գումարուին և կուսակցութիւնք կ՚երեւին, ուրանց վարպետութիւն կարծած այն հնարքներ արդէն հնութեանց կարգին մէջ դասելի են։ Օրինակի համար, երբ Մշակականք տեսեր են թէ իրենք փոքրամասնութիւն են ժողովոյն մէջ, չուզելով ի ներկայութեան դատավճիռ լսել, գերադաս համարեր են ի բացակայութեան դատապարտուիլ։ Ժողովէն այսպէս «առնել քալել»՝ երբ գիտէք թէ ժողովոյն արդիւնքն աննպաստ պիտի լինի ձեզ, նոյնքան հին խաղ մ՚է որքան հին բան մ՚է ժողով կազմել խնդիր մը որոշելու կամ ընտրութիւն մը կատարելու համար։

Թէև Մշակականք փորձեցին կարծել տալ ժողովրդեան թէ 43 պատուիրակաց նոյն աւուր ժողովէն մեկնելովը ժողովը կորուսած եղաւ իւր օրինական ույժ, որով և Մեծ. Պ. Պ. Աբգար Յովհաննէսեանի և Սպանդար Սպանդարեանի ընտրութիւնն օրինաւոր չէ, բայց այս խաբէական փորձ յաջողութիւն չունեցաւ մարտ 8էն ի վեր, ինչպէս չէր ունեցած նոյն օր։ Խնդիրը պարզ է․

—Մէկ-երկու ամիս յառաջ պաշտօնապէս որոշուած էր թէ մարտ 8ին աշխարհական պատգամաւորի ընտրութիւնը պիտի կատարուի Տփղիսի մայր-եկեղեցւոյն մէջ։ Տփղիսի և անոր ենթակայ վիճակաց 103 պատուիրակներէն հազիւ 10ին բացակայութեամբ, ժողովը կը բացուի։ Պ. Գ. Արծրունի դիտողութիւն կ՚ընէ թէ այս ժողով ապօրէն է, զի մէկ երկու եկեղեցեաց ընտրութիւնք բեկուած են Առաջնորդին կողմէ, և Սինոդէն վերջնական որոշում չէ եկած դեռ։ Որովհետեւ քանի մը պատուիրակներ բացակայ են, ուրեմն չենք կրնար ժողով կազմել օրինաւորապէս, այս էր Մշակի խմբագրին փաստը։ Պ. Գրիգոր Արծրունի քաղաքավարութիւն չունենար կենալու և իր առարկութեան տրուելիք պատասխանը լսելու։ Կ՚առնէ կը քալէ ժողովէն, իր հետեւորդաց հետ։ Գեր. Առաջնորդը կը բացատրէ թէ ինք իր թեմին մէջ կատարուած ընտրութեանց օրինաւորութեան պատասխանատու է։ Իրեն ապօրէն երեւցած մէկ քանի ընտրութիւններ՝ ներկայացեալ բողոքներու համաձայն՝ բեկած է։ Չորս շաբաթէ ի վեր իւր այս տնօրինութեան դէմ բողոք մատուցուած էր Սինոդին։ Եթէ Սինոդն հակառակ որոշում մ՚ունենար, չէ՞ր կրնար մինչեւ այն օրն հաղորդել, կամ յետաձգել ժողովը, քանի որ վաղուց յայտնի էր թէ պատգամաւորի ընտրութիւնը մարտի 8ին պիտի կատարուէր։

Եւ յետոյ, եթէ մի քանի պատուիրակաց ընտրութիւնը տեղի չունենալուն, կամ ընտրեալ պատուիրակաց ներկայ չգտնուելուն համար վերջնական ընտրութիւնն յետաձգել պէտք է, ուրեմն ի՛նչ բանի համար օր առաջ թուական կ՚որոշուի ամեն աստիճանի ընտրութեանց համար։ Ուրեմն, Կաթողիկոսի ընտրութիւնն ալ որ մայիս 3ին պիտի կատարուի, պէտք չէ նոյն օր տեղի ունենայ եթէ Հայոց այնքան թեմերու պատգամաւորք ամբողջովին հասած չլինին Էջմիածին, կամ եթէ ո՛ և է թեմի ընտրութեան օրինաւորութեան մասին վէճ ծագի։ Տփղիսի ընտրութեան մասին, Կաւկասիոյ կուսակալն արդէն ծանուցած էր թէ պատուիրակաց երկու-երրորդին ներկայութեամբ ժողով կրնայ բացուիլ, և այս պայման կատարուած էր։ Եւ որ կարեւորագոյն է, քաղաքային կառավարութեան կողմէ Պ. Մ. Ս. Ամիրով պաշտօնապէս ներկայ կը գտնուի ժողովոյն, Գեր. Առաջնորդին աջ կողմը բազմած, և երբ Պ. Գ. Արծրունւոյ և հետեւորդաց մեկնումէն ետքը խնդիր կը ծագի թէ ժողովը կրնա՞յ չարունակուիլ, «Իշխանութեան ներկայացուցիչ» Պ. Ամիրով հետեւեալը կը յայտարարէ․

«Ես ոչինչ արդելքներ չեմ գտնում ժողովը չարունակելու, և համարում եմ այդ չարունակութիւնը բոլորովին օրինական, ինչպէս և նրա բացումը ժողովի անդամների օրինական թուի ներկայութեամբ։

«Այն անձինք, որոնք թողեցին այս ժողովը, ձեռնպահ պէտք է ճանաչուին. ո՛չ ոք իրաւունք չունէր կանգնեցնել (կեցնել) նրանց։

«Ես միանգամայն կանոնաւոր եմ համարում ժողովի չարունակութիւնը, և խնդրում եմ ձեզ, Պարոններ, չընդհատել ձեր պարապմունքը։»

Մնացեալն յայտնի է — Ի ներկայութեան 51 ժողովականաց, Պ. Աբգար Յովհաննէսեան 46 քուէով պատգամաւոր և Պ. Ս. Սպանդարեան 43 քուէով պատգամաւորի փոխանորդ կ՚ընտրուին, և երբ դուրս կ՚ելնեն, եկեղեցւոյն ընդարձակ ծառազարդ բակին և շրջակայքը խռնած հոծ բազմութիւնն ամենայն բարեկարգութեամբ և օրինաւորութեամբ համակրութեան ջերմագին արտայայտութիւն մը կ՚ընէ, մինչեւ իսկ Կաւկասիոյ մէջ և Ռուսիոյ ուրիշ կողմերը տիրող ծանօթ սովորութեան համեմատ՝ իրենց ուսերուն վրայ կը տանին ընտրեալ երկու պատգամաւորներն։

Հետեւեալ օրը [illegible] ռուսերէն թերթն ամենայն անկողմնակալութեամբ պատմելով գործը, գովեստիւք կը խօսի Հայ Եկեղեցւոյ մէջ պահուած ընտրական դրութեան վրայ, և Կաթողիկոսի նշանակութիւնը պարզելէն ետեւ, օրուան դէպքին գալով, Մշակականաց ընթացքն ապօրէն կը գտնէ, և կը պախարակէ զանոնք, ժողովոյ օրինաւոր գործողութիւնը խափանել փորձելնուն համար։

Ըստ մեզ, Պ. Գ. Արծրունի, փոխանակ կասկածելի ցուցնելու թէ Պ. Ա. Յովհաննէսեան և Պ. Սպանդարեան օրինաւորապէս ընտրուած չեն, աւելի բանաւոր բան մ՚ըրած կը լինէր եթէ գոհութիւն յայտնէր դէմ 42 հետեւորդ գտնելուն համար․ զի այսօր ստուգուած է որ այդ թիւն իսկ իրեն անհնար էր գտնել, եթէ ամիսներէ ի վեր՝ արտաքոյ ռուսահայ կղերին ա՛յնպիսի անուն մը դրած չլինէր իւր յօդուածոց մէջ՝ որոյ առջեւ կ՚ակնածին իւր ընթերցողք, և որուն համար միայն միացած էին իրեն հետ (*), մինչդեռ հակառակ կուսակցութիւնը մանաւանդ ո՛չ մէկ անուն յառաջ քշած էր նոյն միջոցին, առաջիկայէն վերապահելով համաձայնիլ ուրիշ վայրերու պատգամաւորաց հետ և աշխատիլ ընտրութեան տաճկաստանցի արժանաւորագոյն եպիսկոպոսաց ո՛ և իցէ միոյն։

* * *

Պ. Աբգար Յովհաննէսեանի նուէրը

Արձագանք և Նոր Դար ընդարձակ խմբագրականներով ի վեր կը հանեն մարտ 8ի ընտրութեան կարեւոր նշանակութիւնն։ Հաճութեամբ կ՚արտատպենք մեծագոյն մասն այն խմբագրականին զոր Պ. Աբգար Յովհաննէսեանի թերթն հրատարակած է իւր մարտ 11ի թուով․

Մարտի 8ի երեսփոխանների ժողովը կատարեց իւր գործը, Վրաստանի և Իմերէթի հայաշատ թեմն ընտրեց իւր ներկայացուցչին։

Թերթիս խմբագիրը, որ արդէն երկու անգամ արժանացել էր մեր թեմի պատգամաւորութեան պատուին, այս անգամ եւս նշանաւոր մեծամասնութեամբ ընտրուեցաւ։

Հաւատարմութեան այս քուէն, որ մարտի 8ին տուաւ ժողովուրդը պ. Ա. Յովհաննիսեանին, ազնուութեամբ վաստակած քուէ էր։ Կրկնակի պատգամաւորութեան ժամանակ թեմիս ներկայացուցիչը կատարել էր իրեն ընտրողների իղձերն ու ցանկութիւնները անթերի կերպիւ։

Իբրեւ ժողովրդից ընտրուած և նրա վսեմ շահերի թարգման, թեմիս պատգամաւորը Ս. Էջմիածնի կաթողիկոսական ընտրութեան ժողովների ժամանակ կատարել է իւր սրբազան պարտքը իւր խղճի եւ հասարակութեան առաջ։

Ընտրութեանց վայրկեանին նրա քուէն չէ բռնաբարել ո՛չ մի անձնական հաշիւ և ոչ մի անհատական բարեկամական զգացմունք։

Հասարակական պատուոյ պաշտօնների միակ վարձատրութիւնը ժողովրդի վստահութեան արտայայտութիւնն է․ այդ վստահութեան ամենափայլուն ապացոյցն էր մարտի 8ի ընտրութիւնը, որ ամէն մի հասարակական ուղղամիտ գործողին պէտք է խրախուսէ։

Կիւրակի օրուան ընտրութիւնը ոչ միայն հաւատարմութեան քուէ էր թեմիս նախկին պատգամաւորին, այլ մի մեծ յաղթանակ հասարակութեան լուրջ մասի։

Այդ յաղթանակը կրկին ապացուցեց, որ մեր հասարակութեան ստուար մասը կարող է մոռանալ ամեն անձնական հաշիւ յօգուտ Եկեղեցու վսեմ շահերի։

Թանգ է մեզ համար այսպիսի մի մեծ իրողութիւն արձանագրելը, որպէս օրինակ ապագայի համար։ ․ ․ ․ ։

Գրեթէ կիսամեայ ժամանակ է, որ մի կուսակցութիւն,— որի պարագլուխն է երբեմն կրօնական տեսակէտով «անխտրական», իսկ այժմ «հողմերի ազդեցութեամբ» կղերական դարձած Մշակ լրագրի Պ. խմբագիրը,—ամենայն ճիգն էր թափում ընտրութեան այս ելքը խանգարելու։

Ընտրական պայքարի բոլոր նրբութիւններն ուսումնասիրած, Պ. Արծրունին և իւր մի քանի համախոհները չարունակ գործում էին․ նրանք յաջողութեան հասնելու ո՛չ մի միջոց չէին խնայում. նրանց նպատակն էր յաղթել․ ուստի ընտրութեանց կեղծ անուան տակ ամենայն միջոց սուրբ էր հաշւում։

Ընտրական գործը յաջողացնելու համար ժողովրդական ձայնորսները շրջում էին թեմիս գաւառներն ու քաղաքիս ծխականների տները․ քահանաներ էին գրաւում խոստումներով, ձայներ էին տեղափոխում եկեղեցուց եկեղեցի, ձայներ էին ստեղծում բժշկական, տնտեսական և այլ շատ ճնշումների ազդեցութեամբ։ ․ ․ ․ ։

Եկեղեցիների մէջ կատարուած ընտրութեան ժամանակ տեսնելով այս աստիճանի չփոթութիւն, թեմիս Սրբազան Առաջնորդը չէր կարող անտարբեր մնալ․ ուստի իւր իշխանութեամբ պատնէշ կանգնեց այդ օրինակ յարձակմանց։

Ինչպէս բոլոր ընտրութեանց ժամանակ պատահած է, մեծամեծ զեղծումներով կատարուած մի քանի ընտրութիւններ քանդուել են, որպէս զի նորերը կանոնաւոր կերպիւ տեղի ունենան։

Այսպիսի միջոցներ աւելի յաճախ ձեռնարկել է թեմիս նախկին Ս. Առաջնորդը (Արիստակէս եպ. Սեդրակեան)։

Այն՝ ինչ օրէնքով և պարզ տրամաբանական դատողութեամբ որոշուած և վճռուած է, հակառակ կուսակցութիւնը մի՛ ճելի համարեց, հեռագիրներ տեղացին Ս. Էջմիածին, մարդիկ ղրկուեցան անկանոնութեան պաշտպանութիւն գտնելու և ոչինչ շահեցան։

Մինչեւ ընտրութեան օրը Ս. Էջմիածնի Սինոդը ո՛չ մի կարգադրութիւն չարաւ, ուստի նրան ստորագրեալ իշխանութեան կարգադրութիւնը պէտք է կատարուէր համաձայն տէրութեան օրէնքի։ ․ ․ ․ ։

Պ. Գրիգոր Արծրունու ընթացքն հասկանալի է․ նա դեռ ձայներ չունեցած յայտնեց որ կամենում է ընտրուել․ ուստի երբ տեսաւ, որ պիտի չը յաջողուի իւր ընտրութիւնը, այն ժամանակ մտածեց, թէ «փախչելն էլ մի շնորհք է»։ Իսկ ի՞նչ բանի վերագրենք նրան հետեւողների ընթացքը։

Մարդիկ կարող են կուսակցութիւն կազմել, կոյր հետեւողներ լինել․ սակայն հասարակութեան առաջ նրանք պարտական են իբրեւ անձինք ներկայանալ և ոչ իբրեւ զրօներ, որ հետեւում են մի որ և է թըւանշանի։

Սակայն այս առթիւ մի այլ անգամ։

Հակառակ կուսակցութիւնը բողոքում է Ս. Առաջնորդի կարգադրութեանց դէմ․ նա անկանոնութիւններ է գտնում գործի մէջ։

Յիշո՞ւմ է արդեօք այդ կուսակցութիւնը, որ նախընթաց ընտրութեան ժամանակ թեմիս նախկին Ս. Առաջնորդն ի՛նչպէս հակառակ օրէնքի և հրահանգի վարուեցաւ։ Ո՞ւր էր այդ կուսակցութիւնը և ինչո՞ւ չէր բողոքում այն ժամանակ․ մի՞թէ այն ժամանակ սինոդը չը կար, մի՞թէ այն ժամանակ լրագրութիւն չը կա՞ր։

Այն հրահանգը որ ընտրութեան համար տուել է Կովկասի նախկին փոխարքան, պատուիրում է Թիֆլիզի ամէն մի եկեղեցուց ԵՐԵՔ երեսփոխան ընտրել, իսկ ամէն գործակալութիւնից («Յաջորդ»ով կառավարուող Փոխ-առաջնորդութիւն) ԵՐԿՈՒ․ արդ, յիշո՞ւմ են Սրբազան Սեդրակեանի երկրպագուք, որ նրա ժամանակ Թիֆլիզի իւրաքանչիւր եկեղեցի ՉՈՐՍ երեսփոխան ընտրեց, իսկ ամէն մի գաւառ միայն ՄԻ երեսփոխան։

Հրահանգի տրամադրութիւնը գաւառների վերաբերութեամբ անարդար է, որովհետեւ Թիֆլիզ քաղաքը իւր 40,000 հայ բնակչով պիտի ունենայ 60 ներկայացուցիչ, (պատգամաւոր ընտրող ժողովին մէջ.) մինչ Գանձակի գաւառը իւր 50,000 հայերով միայն երկու ներկայացուցիչ․ ո՞ւր է քուէի հաւասարութեան սկզբունքը։

Ինչո՞ւ այսպիսի զեղծմանց դէմ չը բողոքեցին այս օրուան բողոքականները։ (Մշակականները)։ ․ ․ ․ ։

Մեր թեմի պատգամաւորն ընտրուած է, և կը մասնակցէ Ս. Էջմիածնի Համազգային ժողովին․ ո՛չ մի սպառնալիք նրան այն տեղ իւր պարտքը կատարելուց չի կարող արգելել։

(*)․ Բայց աւելի խելահասներ, գիտնալով թէ ճշգիւ ո՛վ կը լինի «Մշակ»ի ընտրելին, չէին հրապուրուած նորա թափանցիկ հնարքէն, և մինչեւ իսկ իրեն դէմ դարձած էին, օրինակի համար Պ. Սունդուկեանցի նման նշանաւոր հեղինակ մը, որ հանրածանօթ է իւր ժողովրդական թատերգութիւններով, և որ այս խնդրոց մէջ Պարոն Արծրունւոյ դէմ իւր գրած մէկերկու նամակաձեւ յօդուածոց շնորհիւ մասնաւոր համակրութեամբ մը ողջունուած էր մարտ 8ի ընտրութեան օրը։ Նմանապէս Պ. Ս. Հախումեան, ռուսահայոց հմուտ գրիչներէն, և դեռ շատեր, Էջմիածնի վերջին գործոց առթիւ, Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի և «Մշակ»ի կուսակցութեան դէմ դարձած են։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Անգլիոյ Երեսփ. Ժողովոյ մարտ 29ի նստին մէջ, խնդիր մը ցոյց տուաւ թէ Կլատսթոնեան Ազատականք և Իռլանտացիք ամեն կէտերու վրայ համաձայն չեն։ Իռլանտայի հողային նոր օրէնքին վիճաբանութեան առթիւ, Հակափառնէլեան իռլանտացի երեսփոխան Պ. Քիլպրայտ առաջարկեց որ իռլանտացի վարձակալք օրինական իրաւունք ունենան պահանջել իրենց կալուածատէրերէն որ բանաւոր գնով մը իրենց ծախեն այն արտերը, ագարակները կամ բնակարանները զորս իրենք (վարձակալք) կը գործածեն, կամ կը մշակեն։ Պարտաւորիչ վաճառման սկզբունքը պիտի ընդունուէր, որով միջոց պիտի տրուէր իռլանտացի վարձակալներուն հեռացնելու այն կալուածատէրներն որոնք դժգոհ են, և պիտի պակսէր թիւն փոքր կալուածատեարց, զորս կ՚ուզուի շատցնել Իռլանտայի մէջ։ Այս հակազատական առաջարկութեան հակառակեցան ո՛չ միայն պահպանողական կառավարութիւնն, այլ եւ Կլատսթոնեանց կողմէ Պ. Քամպէլ, յայտնելով թէ չեն կրնար ույժ տալ այնպիսի առաջարկութեան մը որ տուրք վճարող ժողովրդեան վրայ շատ ծանր և գուցէ անօգուտ բեռներ պիտի դնէ։ Պ. Քիլպրայտի առաջարկն 86ի դէմ 177 ձայնիւ մերժուեցաւ։ Եօթն Կլատսթոնեանք առաջարկին ընդդէմ քուէարկեցին, և միւս ազատականք ձեռնպահ մնացին։

—Կ՚երեւի թէ՝ հակառակ բազմաց ակնկալութեան՝ Կալլէսի իշխանին միակ մնացեալ կրտսեր որդին չպիտի նշանուի իւր հանգուցեալ եղբօր խօսեցելոյն՝ Մէյ իշխանուհւոյն հետ։ Ծօրճ իշխան պիտի նշանուի եղեր իւր հօրաքեռորդւոյն՝ Հէսի Ալիս Վիքթորիա իշխանուհւոյն հետ, որ Վեհ. Վիքթորիա Թագուհւոյն թոռն է, ինչպէս նոյն ինքն Ծօրճ իշխան թոռն է Ն. Վեհափառութեան։ Ալիս Վիքթորիա իշխանուհի դուստրն է հանգուցեալ Ա-

---

—)(20)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻՇԲՈՒՐ

ՍԱՆՏՐԻՅԵՈՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳՈՐԾԱՏԱՆ ՊԱՐԻԿԸ

Բայց, բարեբաղդաբար, Պլանշ կորովալից, հաստատակամ կին մըն էր։ Անմիջապէս երբ սրբազան պաշտօն նկատեց իր զաւակը չարախօսութիւններէ զերծ կացուցանել։

Չէր ուզեր որ իր այլայլած դիմագծերուն վրայ կարդացուին իր սրտին և իր հոգւոյն տանջանքներն, իր երկար տուայտանքը։

Եւ ինչպէս որ մրմնջած էր իր զաւկին առջեւ զոր կը քնացունէր․

—Ե՛ս քեզի՛ պիտի մնամ, այնպէս ալ հիմակ կ՚ըսէր ինքնին․

—Չեմ ուզեր որ զաւակս բան մը ունենայ որմէ չիկնի։

Այն ատեն, հանդիսաւորապէս, ինքն իրեն կը խոստանար իր սրտին ամենէն խորը պահել իր անձկութեանց գաղտնիքն և յառաջիկային համար անթափանցելի դիմակ մը առնուլ ամենէն սուր հետաքրքրութեանց հանդէպ։

Եւ ամենէն առաջ, ուզեց ինքզինքը փորձել այս գերագոյն ծածկամտութեան մասին, երբ Բոլ արթննալով, կանչեց իր մայրն՝ համբուրելու համար։

Տղուն առաջին մտածումը միշտ իր մօրն համար էր, երկրորդն՝ Աստուծոյ համար, վասնզի երբեք չէր թերանար իր աղօթքն ընել։ Այն առտուն, կարծես պզտիկ մանչըն իր մայրը կը համբուրէր աւելի բուռն գորովով մը, երբ թէ այնքան տխուր տեսնելով զնա, գուշակէր թէ մխիթարութեան պէտք ունի։

Յետոյ, ծնրադիր, ըրաւ իր աղօթքը, շատ պարզ աղօթք, շատ կարճ, բայց սրտաշարժ, մայրական շրթունքներէ սորվուած։

Տիկ. Մելվիլ եւս աղօթեց, տղուն քովը ծնրադրած։

Յետոյ, ինքզինքն աւելի զօրաւոր զգաց։

Աղուորիկին արդուզարդն և նախաճաշն ընել տուաւ, ապա դպրոց ղրկեց։

Տիկ. Մելվիլ պատուհանին վանդակափեղկին կթնած աչուըներովը իր զաւկին հետեւեցաւ, որ ուրախ զուարթ կ՚երթար, կռնակն ունենալով գիրքերով և տետրակներով լեցուն պայուսակն և արդէն իսկ պզտիկ մարդու մը կերպարանքն առնելով։

Այն ատեն միայն, մանկամարդ մայրը մտածեց թէ առտուան այցելութիւնն ընելու էր գործատեղին։

Ինչպէս տեսանք, դրան շրջանակին մէջ երեւցած էր։

Անմիջապէս իր աչուըները Կապրիէլի տեղւոյն վրայ դարձան։

—Լաւ, մտածեց տեսնելով մանկամարդ աղջկան բացակայութիւնը։

«Խե՜ղճ դժբախտ աղջիկ։»

Իր դէմը նստող գործաւորուհեաց ակնարկին տակ, վարդի թեթեւ գոյն մը ելաւ իր տժգոյն այտերուն վրայ։

Թէեւ իր հոգւոյն վիճակը կարելի եղածին չափ ծածկելու կ՚աշխատէր, գործաւորուհիք առանց դժուարութեան նշմարեցին իր տխրութիւնն և այն փոփոխութիւնն որ յառաջ եկած էր իր դիմագծերուն սովորական արտայայտութեան մէջ։

Բայց, ինչպէս ամեն ատեն, այսօր ալ իրենց վարպետին դէմքն ուշի ուշով դիտելէ կը զգուշանային։

Մնաց որ, հազիւ թէ անիկա ներս էր մտած, Օր. Օքթավի ոտքի ելաւ զայն բարեւելու համար։ Յետոյ, ձեռքովը ցուցնելով նմա երկու պարապ տեղերը․

—Կը տեսնէ՞ք, տիկին, ըսաւ։

—Ի՞նչպէս կ՚ըլլայ որ, ըսաւ մանկամարդ կինը զարմանք յայտնելով, Արմանտ չէ եկած։ Զարմանալի բան։

—Մենք սպասեցինք անոր, տիկին․ տեսնելով որ չիգար, առժամապէս անոր տեղն անցայ և օրուան գործերն սկսել տուի։

—Աղէկ ըրիք, օրիորդ Օքթավի, շատ աղէկ ըրիք, շնորհակալ եմ ձեզ։

«Բայց, յարեց կարճ լռութենէ մը ետք, ի՞նչ բան արգելք եղաւ Օր. Արմանտի գալուն։ Օ՛հ, հիւանդ ըլլալու է։

—Կարելի է, տիկին, ըսաւ Օքթավի։

Յետոյ, քիչ մը տագնապեալ, յարեց․

—Օր. Կապրիէլի մասին ալ մտահոգ եմ։

Տիկ. Մելվիլ չի կրցաւ սարսուռ մը զսպել։ Սակայն և այնպէս հանդարտ ձայնով մը պատասխանեց․

—Օր. Արմանտ այսօր գործատուն չպիտի գայ․ հօրը կը սպասէ և թոյլտուութիւն խնդրած է ինձմէ անոր հետ պտըտելու։

Ճիգ մը ընելով որպէսզի չի նշմարուի որ կը ստէ, շարայարեց․

—Կարծեմ թէ Օր. Անկլաս պիտի բաժնուի մենէ․ շատ պիտի ցաւիմ, վասնզի յանձին նորա պիտի կորսնեմ յոյժ ճարտար գործաւորուհի մը։

Աշխատողուհեաց գլուխներն հակած կը մնային իրենց ձեռագործաց վրայ, բայց խոտորնակ նայուածքներ կը փոխանակէին։

Պահ մը լռիկեաց մնալէ ետք, Տիկ. Մելվիլ յարեց․

—Անպատճառ պէտք է որ լուր առնունք Օր. Արմանտի վրայօք։

—Տիկին, այս օրիորդներէ մին կրնայ անոր տունն երթալ։

—Ժամբան քիչ մը երկայն է․ բայց իրաւունք ունիք, Օր. Օքթավի, պէտք է գիտնանք․ ․ ․ ։

Օր. Էօտըլին հաւանեցաւ անմիջապէս Օր. Արմանտի տունն երթալ։

—Շատ աղէկ, այո, Էօտըլին, գացէք, ըսաւ Տիկ. Մելվիլ, բայց շուտ գացէք և շուտ դարձէք, վասնզի սաստիկ մտահոգութիւն կը զգամ։

Աշխատողուհին անմիջապէս պատրաստուեցաւ մեկնելու և մանկամարդ կինն անոր ընկերացաւ մինչեւ սանդուխը։

Ա՛լ տարակոյս չկար, գործաւորուհիք, գլխաւորապէս Օքթավի, լաւ համոզուած էին հիմակ թէ անպատճառ առջի օրուընէ ի վեր ծանր բան մը դառնալու վրայ էր։

Գաղտաբար իրարու կը նայէին, աննշմարելի նայուածքներ կը փոխանակէին։

Օքթավի ներքնապէս շատ յուզուած, շատ տագնապած էր, վասնզի ա՛լ ապահովապէս գիտէր թէ վարպետն իմացած է Կապրիէլի փախուստն։

Հաւանօրէն Տիկ. Մելվիլ սոսկալի յանդիմանութիւն մը ըրած էր խե՜ղճ աղջկան և գուցէ իսկ եւ իսկ վռնտած էր զայն տունէն։

Մենք գիտենք թէ Օր. Օքթավի ի՛նչ ըղձացում կը տածէր Կապրիէլի նկատմամբ։ Ա՛հ, ո՞րչափ կ՚ուզէր գիտնալ։

Փոխանակ անմիջապէս գործասենեակ դառնալու, Տիկ. Մելվիլ ինքնին ըսած էր հառաչելով․

—Հիմակ, երթանք տեսնենք խե՜ղճ աղջիկը։

Եւ աշխուժիւ վեր ելած էր չորրորդ յարկը տանող սանդուխին աստիճաններէն։

Ի՞նչ վիճակի մէջ պիտի գտնէր խեղճ աղջիկը որ անշուշտ իրեն կը սպասէր, ամենասոսկալի անձկութեանց ենթակայ։

Անհուն ցաւ մը կար անոր որուն ամբոքում մը տանելու էր փութով։ Պլանշ տակաւին բան մը որոշած չէր, ի՛նչ ընելիքին վրայ խորհելու կարողութիւն ունեցած չէր․ բայց այսքան երկար ատեն իր դժբախտութեան կիզիչ տպաւորութեան տակ չպիտի մնար։

Դրան հասնելով՝ կանգ առաւ, դողահար, չքացած, և քանի մը բոպէ շունչը բռնելով ականջ դրաւ։ Ամենաչնչին շշուկ մը իսկ չի լսեց։

Յանկարծ, Պլանշ դունատեցաւ և կուրծքին վրայ ահագին ծանրութիւն մը զգաց որ զինք կը ճմլճմլէր։

Ահռելի մտածում մը անցած էր իր վրդոված ուղեղէն։

Երկուքին համար ալ կսկծագին և անգութ այն յայտնութենէն ետքը մանկամարդ աղջկան սարսափելի յուսահատութիւնը միտքը կը բերէր և կ՚երեւակայէր թէ խեղճ աղջիկն անձնասպան եղած պիտի գտնէ։

Ձեռքը ճակտին տարաւ, որ թէեւ քիչ մը առաջ կ՚այրէր, հիմակ սառած էր․ յետոյ ճնշեալ ձայնով մը․

—Բայց ոչ, անկարելի է, մրմնջեց, այդ ամենն անոր ըսելէս ետքն, այդ բանն ըրած ըլլալու չէ։

Զարկաւ դրան։

Պատասխան չկայ։ Ականջ դրաւ։ Ոչինչ։ Ոչ իսկ ամենաչնչին աղմուկ մը որ հասկցունէր թէ սենեկին մէջ կենդանի արարած մը կայ։

Աւելի սոսկալի կերպով տագնապած, Տիկ. Մելվիլ անկուեցաւ։

Բոլոր իր արիւնն երակներուն մէջ կը խուժէր։

—Օ՛հ, Տէ՛ր Աստուած, ո՛հ, Տէ՛ր Աստուած, հեծեց։

(Շարունակելի)

Լիս Իշխանուհւոյն, դուստր Վիքթորիա Թագուհւոյն և ամուսին Հէսի մեծ-դքքսին, որոյ մահն անցեալ օր ծանուցուեցաւ։ Մայիս ամսուն Ալիս Վիքթորիա իշխանուհին յԱնգլիա պիտի գայ, և մի քանի ամիս հոն պիտի լինի իւր մեծ մօր։ Քսան տարեկան է, իւր ապագայ նշանածն ալ մէկ քանի տարի մեծ է իրմէ։ Վիքթորիա Թագուհին շատ յարմար կը գտնէ եղեր իւր այս երկու թոռանց ամուսնութիւնը։

ՕՍՄԱՆԵԱՆ ԵԼՄՏԱԿԱՆ ՎԱՐԿՆ ՅԵՒՐՈՊԱ

Եւրոպեան լրագիրք ոմանք կը կարծեն թէ Օսմ. հին փոխառութեանց արժեթուղթերը դեռ եւս ունին բարձրանալ՝ հետեւեալ պատճառներով գլխաւորապէս․

1. Պարտուց քանակութենէն մեծապէս պակսած ըլլալը վերջերս։
2. Գլխաւճարի գումարին վրայ եղած վերջին յաւելումն, որով պարտուց մայրգումարն աւելի արագապէս պիտի հատուցուի։
3. Պարտուց տոկոսն և գլխամասը վճարելու յաւելեալ հասութից անձումն։ (Հանրային Պարտուց վերջին տարեշրջանը նախորդին վրայ 50,000 ոսկւոյ հասութից յաւելում կը ցուցնէ։)
4. Եւրոպիոյ մէջ շատ մը դրամագլուխ տրամադրելի կը մնայ՝ շահաւոր արժեթուղթ գնելու համար։
5. Երկրորդ կարգի շատ մը արժեթղթոց յարգը կոտրած ըլլալով, գնորդ չեն գտներ այժմ, և անոնց փոխարէն աւելի ապահով թուղթեր կը փնտռուին։ (Հարաւ-Ամերիկեան, Սպանիական, Փորթուկէզ, Սերպիական, Հելլենական թուղթեր այլ եւս կարող չեն մրցիլ օսմ. արժեթղթոց դէմ։)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹՂԹՈՑ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Ժընեւէն մարտ 30 թուով նամակ մը կ'ըսէ․

«Օսմ. արժեթղթոց դրամատունն, որոյ ընդհանուր ժողովն երեկ գումարեցաւ աստ, Ընկերակցութեան կանոնագիրն հաստատելով, որոշեց գի բաժնեթղթի վրայ (աքսիոն) 20 միլիոն ֆր.ի դրամագլխին մէկ հինգերորդը կանխիկ վճարուի, և 30 միլիոն ֆր.ի պարտաթուղթ (օպլիկասիոն) հանուի, և պարտաթուղթերն հանելէն ետքն եթէ պէտք տեսնուի, դրամագլուխն աւելցուի։ Ի սկզբան 16 միլիոն ֆր. պարտաթուղթ պիտի հանուի, 500 ֆր.նոց 32,000 պարտաթուղթով, 4 ու կէս առ հարիւր տոկոսաբեր, և 500 ֆրնոց թուղթն հասարակութեան տրուելով 492—495էն։ Տասն եւ չորս տնօրէններ կարգուեցան, կամ վարչական խորհրդոյ անդամներ, յորս են Սըր Էտկար Վինսընդ, Պ. Պ. Վէրն, Նավիլ, Պերժէ, Շարլ Մալէ, ևլն։

Ի ՓԱՐԻԶ

Ի Փարիզ օրուան մեծ դէպքն է մտահոգաւոր չարագործի մը ձերբակալումն, որ երկու երեք շաբաթէ ի վեր փութոյ պնդութեամբ կը փնտռուէր։ Ոստիկանութիւնն ամեն կողմ հրամաններ կ'արձակէր, և խուզարկութիւնք ի դերեւ կ'ելնէին։ Վերջապէս, մինչ գաւառներու մէջ կը փնտռուէր, այս ոճրագործ Փարիզի ժողովրդական ճաշարանի մը մէջ ճաշած միջոցին անխորհուրդ խօսքեր կը զրուցէ, որոյ մէջ ճաշարանին մարդիկը կասկածի կ'երթան, և ուշադրութեամբ դիտելով, կը տեսնեն որ ոստիկանութեան կողմէ նշանակեալ մարդուն կը համապատասխանեն իւր դէմք և մարմինոյ զանազան մասնաւորութիւնք։ Իմաց կուտան ոստիկանութեան, որոյ գործակալք իբր թէ ճաշելու համար չարագործին դիմացը բազմելով, աւելի կ'ուզենան ուշիւ ուշով քննել զինք, և թէպէտ չարագործն հասկնալով որ զինք կը դիտեն, փախչիլ կը փորձէ, բայց թէ՛ ներսը և թէ դուրսը գտնուող գործակալք շուտով կը բռնեն զինք, հակառակ բուռն դիմադրութեան։

Ի սկզբան կ'ուրանայ թէ փնտռուած չարագործն ինք ըլլայ։ Բայց ո՛չ միայն իւր ֆիզիքական հանգամանք ճշդիւ կը համապատասխանեն այն նկարագրոյն զոր ըրած էին արդէն բռնուած մեղսակիցք, այլ եւ իւր գրպանէն կը գտնուի ընկալագիր մը վերջին բնակարանին եռամսեին վճարման զոր վարձած էր Փարիզի մօտերն, իւր սենեակը խուզարկուելով, բազմաթիւ ապացոյցք երեւան կ'ելնեն։ Այս մարդ շատ մը տեսակ ոճիրներ գործած էր։ Մարդասպանութիւն, դրամանենգութիւն, գողութիւն, սպանութեան զանազան փորձեր, ևլն. ևլն., այնպէս որ իւր անունն վերջերս սարսափ կ'ազդէր։ Այսպիսի ոճրագործի մը ձերբակալումը մեծ պատիւ կը բերէ ֆրանսական ոստիկանութեան, մանաւանդ որ՝ իրարու յաջորդող փաստերուն առջեւ անկար մնացեալ՝ ամեն բան խոստովանած է, վերջին ոճրէն զատ։ Այս ձերբակալումը կատարող գործակալին Պատուոյ Լեգէոնի պատուանշան տրուեցաւ, իմացնող ճաշարանապետն 1,000 ֆր., և ոստիկանութեան վերատեսուչ Պ. Լօզէ, որ օրուան մարդն է նորէն, մեծ պատիւ կը ստանայ։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Կը յիշուի թէ մաքսային ուղղութեան բերմամբ Ֆրանսա անցեալ տարի հելլենական չամիչներուն վրայ եւս մաքս դնելով, պակսեցուցած էր այն պատուական պտուղին մուտքն ի Ֆրանսա, նկատելով թէ չամիչէն ալ գինի կը շինուի և ֆրանսական այգեպանութիւնը կը վնասուի։

Կը յիշուի նաեւ թէ ֆրանսական մաքսերու այս վիճակէն օգուտ քաղելով, Անգլիա յանձնառու եղաւ գրեթէ անմաքս ընդունելու հելլենական չամիչներն և այս օգտակար տնօրինութեան փոխարէն, Յունաստան մաքսի զեղչումներ ըրաւ ի նպաստ անգլ. ապրանաց։

Արդ, Սպանիոյ հետ մաքսային պայքարին պատճառաւ Ֆրանսա իրեն պէտք եղած չամիչն այն կողմէ նաեւ չկրնալով կամ չուզելով ստանալ, նորէն դէպ ի Յունաստան դարձած է։ Հիմա ֆրանսական վաճառատուներ մեծաքանակ չամիչ բերել կուտան Յունաստանէ։ Անցեալ տարուան բերքէն շատ մը բան մթերեալ կը մնայ Յունաստանի մէջ, և հիմա դիւրաւ պիտի փոխանակուի ոսկւոյ հետ, որուն ապաքէն՝ իւր տնտեսական և ելմտական անձկութեան մէջ մեծապէս կը կարօտէր Յունաստան։

—Հելլէն կառավարութեան այն տնօրինութեան վրայ որով ոսկւոյ վրայ սակարանական շահադիտութիւններն արգիլեց (պայմանաժամով, «ֆէրմ» կամ «փրիմ» գործողութիւնք), ոսկւոյ յաւելեալ բարձրացումը կանգ առաւ, և ոսկի 20 ֆրանքնոցն, որ հելլենական թղթադրամով 31½ տրահմի (ֆրանք) կ'ըներ, իջաւ 28ի, և Փարիզի վրայ չէքն, որ ութ օր յառաջ 157 էր, իջաւ 143ի մարտ 18/30ին, և աւելի իջնալու հակամիտութեամբ։ Օրուան մեծ խնդիրն առաջիկայ երեսփոխանական ընտրութիւնք են, որոց համար մեծ պատրաստութիւնք կան։ Կը կարծուի թէ ո՛չ Պ. Թրիքուբիս, ոչ Պ. Տէլեանիս ընտրելի 200 երեսփոխանաց մեծամասնութիւնը չպիտի շահին, և երրորդ կուսակցութիւն մը պիտի կազմուի։

ԳԵՐՄԱՆՔ ԵՒ ՌՈՒՍՔ

Լեհ լրագիրք կը ծանուցանեն թէ գերման սպայք զինուորական օդապարիկներով վեր ելած և օդէն մէջէն Վարշաւայի բերդերուն դիրքն և պաշտպանութիւնքը դիտած ըլլալով, Ռուսք զայրացած են Գերմանաց դէմ։

ՌՈՒՍԱԿԱՆ ԴՈՐԾԵՐ

Ռիկայի (պալթիկեան գաւառ) Բազմարուեստական վարժարանին գերման դասախօսք ներկայ վեցամսեայ շրջանին վերջը պիտի արձակուին և անոնց տեղ ռուս դասախօսք պիտի անուանին։ — Լեհաստանի երկաթուղեաց պաշտօններու մէջ օտար հպատակներ չգործածելու հրաման եղած լինելով, 16 աւստրիացի և 8 գերման բարձրագոյն պաշտօնեայք ռուսական հպատակութիւն ընդունելու համար դիմեցին Ռուս կառավարութեան, որ Աւստրիացւոց խնդիրքն ընդունեց, բայց Գերմաններըը մերժեց։

ԱՐՏԱՔՍՈՒՄՆԵՐ

Ի Փարիզ կատարուած մի քանի ձերբակալութեանց հետեւանօք, ֆրանսական կառավարութեան որոշմամբ, Պ. Լօզէ ֆրանսական հողէն արտաքսեց 40ի չափ վնասակար օտարական մարդիկ։

ԳԵՐՄԱՆ ՇՈԳԵՆԱՒՔ

Վիլհելմ կայսր, որ մեծապէս կը շահագրգռուի ծովային գործերու, հեռագիր մ'ուղղելով գերմանական Լոյտի Ընկերութեան տնօրէն խորհրդոյն, շնորհաւորեց զայն, մէկ քանի ամիս առաջ Ուայթ կղզւոյն մօտ ժայռերու վրայ խրեալ Ալտէր շոգենաւուն ազատման համար։ Իւր հեռագրով կ'ըսէ Ն. Վեհափառութիւն թէ այս շոգենաւուն այնքան վտանգաւոր տեղ մը այսչափ ժամանակ տարերաց դէմ դնելն ապացոյց է գերմանական արուեստագործութեան տոկունութեան։

ԱԶԳԱՅԻՆ
Լուրեր

Կեսարիոյ առաջնորդ Գեր. Տրդատ Ծ. վարդապետ Պալեան, որ իբրեւ եկեղեցական պատգամաւոր իւր վիճակին անձամբ պիտի երթայ էջմիածին մասնակցելու կաթողիկոսական ընտրութեան, և վիճակին գաւառային ընդհանուր ժողովոյ ատենապետ Մեծ. Համբարձում էֆէնտի Մոսուիչեան, որ աշխարհական պատգամաւոր ընտրուած է, Կեսարիայէն ճամբայ ելած են մայրաքաղաք գալու համար։

* * *

Զմիւռնիոյ առաջնորդ Գեր. Տ. Ներսէս Ծ. վարդապետ Ալլահեան երեկ մայրաքաղաքս հասաւ եգիպտական շոգենաւով։

* * *

Հրամանաւ Ամեն. Պատրիարք Հօր՝ Տ. Ոսկի քահանայ կը պատրաստուի այսօր Պրուսա ուղեւորել, ուր ժամանակ մը պիտի մնայ հոգեւոր պաշտօնով։

ՄԵԾԱԳՈՒՄԱՐ ԿՏԱԿ ՄԸ

Բաղուաբնակ մեծահարուստ և բարերար ազգային Պ. Աւետիս Ղուկասեան աւելի քան [illegible] հազար ոսկւոյ կտակ մը ըրած է, որոյ մասին Բագուէն հետեւեալ մանրամասնութիւնները կը հաղորդեն Թիֆլիզի լրագրաց․

«Պ. Ղուկասեան լինելով անզաւակ, իւր կնոջ համար թողնում է Աւետիս շոգենաւի ընկերութեան կէս մասը, որի արժէ՛ 120,000 ր., կանխիկ դրամով՝ 15,000 ր., Լազարեան ճեմարանում երկու թոշակաւորներ պահելու համար՝ 15,000 ր., Շուշու հոգեւոր դպրոցին՝ 5,000 ր., նոյն քաղաքի օրիորդաց դպրոցին՝ 5,000 ր., Բագւում մի նոր եկեղեցի կառուցանելու՝ 30,000 ր., Ղուբայի գաւառում Բիլվար գիւղի հայոց ուսումնարանին՝ 1,000 ր., Բագուի Մարդասիրական ընկերութեան օգտին՝ 20,000 ր., իր երկու քոյրերին ամեն մէկին՝ 4,000 ր.։ Բայց ամենանշանաւոր գումար, այն է՝ 150,000 ր., Պ. Ղուկասեան կարգադրել է այսպէս. այդ գումարը, որ մնացած է «Արաֆելեան և ընկերութիւն» կոչված նաւթային մեծ ընկերութեան մէջ, պէտք է մնայ անձեռնմխելի, մինչեւ նրա գումարը կը հասնի 400,000 րուբլի քանակութեան, այնուհետեւ այդ գումարի անմիջական կարգադրութեան իրաւունքը թողած է կտակակատարներին՝ միայն այն պայմանով, որ այդ գումարով բացվի մի մեծ դպրոց։»

* * *

Թիֆլիզի թերթերէն՝

Վաղը, կիրակի օր, մարտի 15ին, պէտք է լինի թեմական պատգամաւորի ընտրութիւն Շուշում, իսկ մարտի 21-ին՝ Երեւանում։ Աստրախանում թեմական պատգամաւոր է ընտրված Պ. Յ. Սարգսեան։ Շամախու թեմի պատգամաւորը վաղուց է ընտրված, այն է Պ. Լալայեան։ Մոսկվայից մեզ գրում են, որ ցանկութիւն կայ Բեսարաբիայի թեմական պատգամաւոր ընտրել Պ. Սմբատ Շահազիզին։

—Վաղարշապատից. «Մարտի մէկին կայացաւ Վաղարշապատում գաւառական պատգամաւորների ընտրութիւնը. ընտրվեցան՝ գաւառապետ Պ. Խանազեան և Պ. Ս. Մանդինեան»։

—Կարսից. «Ամսիս 23-ին կատարվեց այն երկու պատգամաւորների ընտրութիւնը՝ որոնք գնալու են Երեւան թեմական պատգամաւորի ընտրութեանը մասնակցելու։ Ընտրվեցան բժ. Մելիք-Փարսադանեանց և Պ. Սմբատ Տէր-Յակոբեանց»։

—Եւպատորիայից. «Ամսիս 23-ին, տեղիս հայոց եկեղեցում, կայացաւ կաթողիկոսի ընտրութեան համար գաւառական պատգամաւորի ընտրութիւնը։ Ժողովը միաձայն ընտրեց Պ. Յակոբ աղա Սեֆերեանին, իսկ նրա բացակայ լինելու պատճառով—կանդիդատ ընտրեց, փաստաբան Դ. Մուրադեանին»։

Ներքին լուրեր

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Տիարպէքիրի Լիճէ գաւառակին գայմագամ անուանեցաւ Մէհմէտ Իզզէթ էֆէնտի, նախկին գայմագամ Ճէպէլը Սիմանի։

Իւլայի երկրորդ աստիճան տրուեցաւ կայս. անձնապահ զօրաբանակի սպայակոյտի գլխանին առաջին ճիզմէնգէր-տնօրէն Ալի պէյի։

Խամիսէի աստիճան՝ Բ. Դրան թարգմանութեանց սենեակի քարտուղարներէն Ճէլալէտտին պէյի։

Ականաւոր Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Մեծ-Եպարքոս և կայս. առաջ թիկնապահ Բարձր. Ահմէտ Ճէվատ փաշայի։

Երրորդ կարգի Մէճիտիյէ՝ Հըճէ գաւառին կառավարիչ Ճէլալ փաշայի։

Չորրորդ կարգի Օսմանիյէ՝ Պաղտատի նահանգին Իտարէի ժողովոյ անդամներէն Ապտուլգատէր փաշայի։

ԲԱՐՁՐ. ԽՏԻՎԸ

Վսեմ. Ահմէտ Նյուզ փաշա երէկ առաւօտ Աղեքսանդրիա ժամաներ է ուր եգիպտական կառավարութեան երկու բարձրաստիճան պաշտօնատարներ և Խտիվին երկու թիկնապահներ կը սպասէին օսմ. պատուիրակութեան։ Կայս. Ֆերմանին ընթերցումը տեղի պիտի ունենայ վաղը, չորեքշաբթի, միջօրէէն մէկ ժամ առաջ։

* * *

Եգիպտական լրագիրք կը ծանուցանեն թէ Խտիվ Բարձր. Ապպաս փաշա՝ իւր հօր՝ վախճանեալ Թէվֆիք փաշայի ժառանգութենէն իրենց ինկած բաժինը թողած է։

ԹԷՆՊԷՔԻԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Թէնպէքիի ընկերութիւնը՝ մաքսային խորհրդոյն հետ, Թէնպէքիի առաքման և վաճառման, գործակալաց պարտականութիւններուն և այլոց մասին կանոնագիր մը պատրաստելով ներկայացուցած է պետական խորհրդոյ քննութեան։

ԵԷՆԻ ԳԱՊՈՒԻ ՀՐԿԻԶԵԱԼՔ

Քաղաքապետութիւնն հրահանգուած է թաղապետութեան Ա. շրջանակին անմիջապէս տումար մը պատրաստել, յորում նշանակուին Եէնի-Գաբուի հրդեհէն այրած շէնքերու քանակութիւնն ու անոնց արժէքն, որպէս զի հրկիզելոց տրուելիք նպաստին քանակութիւնն որոշուելով բաշխման եղանակին հիմ բռնուի։ Թաղապետական շրջանակն եւս ձեռնարկած է առ այդ հարկ հարկ եղածն ի գործ դնելու։

ԵՐԿԱԹՈՒՂԻՈՑ ՄԵԾ ՊԱՐԳԵՒ

Կ'ըսուի թէ Ռումէլիի Երկաթուղեաց վիճակահանութեան մեծ պարգեւը, վեց հարիւր հազար ֆրանք, յարդ վաճառող Գումգաբուցի հայ մը շահեր է։

ԴԵՍՊԱՆԱԿԱՆ ՀԱՑԿԵՐՈՅԹ

Ռուսական դեսպան Պ. Նէլիտոֆ երեկ գիշեր դեսպանատան մէջ շքեղ հացկերոյթ մը տուաւ ի պատիւ անգլիական դեսպան Սըր Ֆլար Ֆօրտի։ Ներկայ էին նաեւ Օսմ. Պանքայի ընդհանուր տնօրէն Սըր Էտկար Վինսընդ, անգլիական դեսպանատան առաջին քարտուղարն ու առաջին թարգմանն և ռուսական դեսպանատան ու հիւպատոսարանի պաշտօնեայք ոմանք։ Սեղանն սկսաւ ժամ 1½ին և աւարտեցաւ 3½ին։ Սեղանէն յետոյ ցայգահանդէս մը տրուեցաւ, որուն ներկայ գտնուեցան դեսպանք ոմանք և այլ հրաւիրեալք։

ՀԵՄԵԼԱՁՕՐՔ

Սպարապետի Դրան և հունգարական Շվիմմէր դրամատան ներկայացուցչին միջեւ կնքեալ պայմանագրով մը համաձայն՝ 1,400 ձիեր պիտի գնուին չորրորդ զօրաբանակին համար։ Շաբաթս վերջը մայրաքաղաքս կը հասնի այդ ձիերու մէկ մասը։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄ

Ֆրանսական նաւատորմը, կ'ըսէ Թըրքէ, որ այժմ Կրետէի Սուտա նաւահանգիստը կը գտնուէր, դէպ ի Պիրէոս ճամբայ ելեր է։

ՊՈԼՍՈՅ ՔԱՐԱՓՈՒՆՔ

Պոլսոյ քարափանց ընկերութիւնը 15 տարուանը 6400 ոսկւոյ վարձած է Ֆընտըքլըի բաղնիքին ետին՝ ծովեզրը գտնուած ընդարձակ գետին մը, ուր առժամեայ գործարան մը պիտի կառուցանէ պատրաստելու համար քարափանց շինութեան յատուկ պիտոյքները։ Գործարանի կառուցումը սկսած է և ընկերութիւնն երեք հարիւր ոսկի տուած է այդ գետնոյն նախորդ վարձակալին՝ փայտի վաճառականի մը՝ հոն գտնուած փայտերն այլուր փոխադրելու և վարձակալութեան նախորդ պայմանագիրը ջնջելու համար։

ԵԷՄԷՆ

Եէմէնի գաւառական թերթին մէջ կը կարդանք թէ հինգ-վեց հարիւրի չափ յէլուզականներ Հիճճէ գաւառակի Շուքաքէր ու Պէնիավամ գիւղախումբերուն մէջ խռովութիւն յարուցանելու նպատակաւ այդ կողմերն եկեր են։ Անմիջապէս զինուորք զրկուեր են զանոնք այդ կողմերէն վանելու համար և երբ զինուորք Պէնիավամ ժամաներ են, յէլուզականները լեռանց վրայ ապաստաներ են, սակայն զինուորք այդ տեղերու վրայ յարձակելով յէլուզականներէ քսանի չափն սպաններ ու վիրաւորեր և միւսներն ալ ցիրուցան ըրեր են։ Շնորհիւ Վեհ. Սուլթանին՝ այդպէս այն կողմերը մաքրուեր է աւազակաց ներկայութենէն։ Զաֆիր անուն տեղն եւս պաշարուեր է Միրլիվա Ալի փաշայի կողմէ։

Նոյն թերթը կը յարէ թէ կուսակալութեան հասած հեռագիր մը բարձրագոյն հրաման մը հաղորդած է, որուն համաձայն կը ծանուցուի անմիջապէս իմաց տալ Եէմէնի մէջ անդորրութիւնն աւելի եւս ապահովելու համար հարկ եղած ամեն պէտքերն և այլն։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ստոյգ կ'իմանանք թէ կայսեր զինուորական երկրորդական վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտներէն 53 երիտասարդք մայրաքաղաքս պիտի գան, զինուորական բարձրագոյն վարժարանը մտնելու համար։

ՖՈՆ ԿՐԱՊՔՈՖ ԳՆԴԱՊԵՏԸ

Սպարապետի Դուռն եռամեայ պայմանագիր մը կնքած է Ֆոն Կրապքոֆ գերմանացի գնդապետին հետ, որ թնդանօթաձգութեան հրահանգիչ է։

ԱԴՐ. ՊՈԼՍՈՅ ՊՈՒԼԿԱՐՔ

Ադր. Պոլսէն կը գրեն թէ նահանգին պուլկարները խնդրագիր մը ուղղեր են մայրաքաղաքիս պուլկարաց էկզարքին, աղաչելով որ բարեխօսէ օսմ. կառավարութեան մօտ, որպէս զի հոն ուր պուլկարաց մեծամասնութիւն կայ, օրթոտոքս մուխթար մը անուանելու իրաւունքը ունենայ պուլկար հասարակութիւնը. իսկ այն տեղերն որ հաւասար թուով յոյնք և պուլկարք կան, յոյն և պուլկար մուխթարք միանգամայն ընտրուին։

Հ Ր Դ Ե Հ

Այս առաւօտ հրդեհ ծագեցաւ ի Սթենիա և Նաւամատոյցին մօտ տուն մը այրեցաւ որուն ներքեւ սրճարան կար։ Հրկիզեալ շէնքին տէրն ու վարձակալը հայ էին։

ՎՈՒԼՔՈՎԻՉԻ ՍՊԱՆԻՉԸ

Այս առաւօտեան թուրք լրագիրք հետեւեալ շահեկան մանրամասնութիւնները կը հաղորդեն ի մասին՝ մայրաքաղաքիս պուլկարական գործակատար հանգուցեալ Տօքթօր Վուլքովիչի սպանիչներուն և անոնց ձերբակալման պարագայից․

Տօքթ. Վուլքովիչի սպանութեան դէպքէն երկու օր յետոյ ոստիկանութիւնը ձերբակալած էր Խրիսթօ և Մէրճան անուն երկու պուլկարներ՝ իբրեւ հեղինակ հանգուցեալ Տօքթ. Վուլքովիչի սպանութեան։ Անոնց նկատմամբ կատարուած նախնական քննութիւնք աւարտելով, գրութիւնք անդենները յանձնուած էին Դատական նախարարութեան։ Նոյն պաշտօնատան հարցաքննիչ դատաւոր Ֆէյզի պէյի կողմէ ամենայն ուշադրութեամբ կատարուած հարցաքննութեանց շնորհիւ օրինական ապացոյցներով հաստատուած է թէ ոճրագործն է Մէրճան, իսկ մեղսակիցն է ընկերը՝ Խրիսթօ։ Հարցաքննութեանց տեղեկագիրն ի մօտոյ պիտի յանձնուի ամբաստանիչ ատենին։ Աւասիկ ամփոփումն այն քննութեանց որք ցարդ կատարուած են թէ՛ ոստիկանութեան պաշտօնատան և թէ դատական նախարարութեան հարցաքննիչ դատաւորի դիւանին մէջ։

Ամիս առաջ Սօֆիայի մէջ բանտարկուած ըլլալով մեռնող Մանասօղլըի Բէնէկ գաւառակցի պուլկար Տէմչօյի եղբայրները՝ Նաում և Նիքօլա, որք Պուլկարիայէն Օտեսա փախած էին, նամակ մը ղրկած են ի Սերպիա գտնուող իրենց մէկ բարեկամին։ Այդ նամակ, որ պուլկարական գործակալութեան կողմէ ձեռք անցուած է, հետեւեալը կը պարունակէ․— «Կ. Պոլիս «գտնուող Խրիսթօն սեպտեմբեր 10ին Օտեսա հրաւիրելով, որոշեցինք որ նորա բա«րեկամներէն մին, որուն ի՛նչ տեսակ «մարդ ըլլալը Կ. Պոլսոյ մէջ հասկցայ, «գտնուելուն պէս պիտի ըսէ թէ որո՛ւ գը«լուխը ճզմել հարկ է։ Խրիսթօ պատաս«խանեց թէ մարդը պիտի գտնէ և փաստ «է թէ իւր խօսքը մտիկ ընելով այդ գործը «անոր հետ պիտի կարգադրէ. այդ մարդ «պուլկար մ'է և այդ տեսակ գործեր ի«րեն արհեստ ըրած է։ Տղայութենէն ի վեր «Կ. Պոլսոյ մէջ միայն այդ արհեստով զբաղած «է։ Մէկ քանի օր առաջ Խրիսթօէն նամակ «մը առի որով կը գրէ թէ գործը կարգին է «եւ Վուլքովիչը ցոյց տալէ զատ ուրիշ «գործ մը մնացած չէ։»

Ոստիկանութիւնը ձերբակալած էր ի Գասըմ Փաշա խանուէճի Բէնէկցի Խրիսթօ անուն մարդ մը։ Յետ քննութեան, հաստատուած է թէ այս անձ այն Խրիսթօն է որուն անունը յիշուած է վերոյգրեալ նամակին մէջ։ Խրիսթօ կրկին և կրկին հարցաքննուելով պահ մը ուրացած է, սակայն յետ քննութեան երեւան ելած ըլլալով որ այդ գործին մասնակցութիւն ունի և տեղեակ է, վերջապէս լեզուն փոխած և յայտարարած է թէ 6-7 ամիս առաջ նամակ մը ստացած է Օտեսա գտնուող վերոյիշեալ Բէնէկցի Նաում անուն անձէն որ առաջարկած է իրեն Օտեսա երթալ։ Խրիսթօ Օտեսա երթալով Նաումին հետ տեսնուեր և այս վերջինն ըսեր է իրեն թէ Վուլքովիչի սպանութիւնը պահանջուած ըլլալով, պէտք է իրեն զրկել Կ. Պոլիս գտնուող Մէրճանն, որ կրնայ այդ գործն ի գլուխ հանել։ Խրիսթօ այս առաջարկն ընդունելով Կ. Պոլիս վերադարձեր և Մէրճանը կոչելով այս որոշումը իրեն հաղորդեր է, սակայն Մէրճան այդ առաջարկը չընդունելով, Խրիսթօ խնդիրը հաղորդեր է Նաումին։ Ժամանակ մը յետոյ, այսինքն անցեալ դեկտեմբերին, Նաում Կ. Պոլիս եկեր է։ Խրիսթօ զայս իմանալով Վլատիմիր Շիշմանոֆէ, շոգենաւ գնացեր և Նաումին հետ տեսնուեր է։ Երկրորդ օրը Ղալաթիոյ վանքը գնացեր է, ուր Նաում հիւրընկալուած էր։

Հոն տեսակցութիւն մը ընելէ յետոյ Նաում առաջարկեր է իրեն որ Մէրճանն առնու և երթայ ի Խասքէօյ մսավաճառ Տիմիթրիի տունը։ Խրիսթօ մէկ քանի օր յետոյ Մէրճանին հետ որոշեալ տեղը գնացեր և հոն ի ներկայութեան Նաումի իրենց մէջ խօսակցութիւն մը տեղի ունեցեր է Վուլքովիչն սպանելու համար։ Նաում իւր խօսքն Մէրճանի ուղղելով ըսեր է. «Լսեցի թէ դու այս տեսակ գործերու համար պէտք եղած ճարտարութիւնն ու կարողութիւնն ունիս. զքեզ հոս կոչելով նպատակ ունիմ Վուլքովիչը սպանել տալ։» Մէրճան պատասխաներ է թէ կարող չէ։ Ասոր վրայ Նաում պատուիրեր է Մէրճանին որ այս գաղտնիքը դուրս չհանէ և չորս ոսկի տուեր է նմա։ Մէկ քանի օր յետոյ Նաում իւր մօրն հետ, որ հայրենիքէն եկած էր, Օտեսա գնացեր է և մեկնելէն շաբաթ մը առաջ ըսեր է Խրիսթօի թէ Վլատիմիր Շիշմանոֆի ըսածին նայելով Օտեսայէն երկու մարդեր եկած են Վուլքովիչը սպանելու համար, հետեւաբար Մէրճան թող չսպանէ։ Սակայն Վլատիմիր Շիշմանոֆ այդ տեսակ բան մը չէ ըսեր և անոր ներկայութեանն ո և է խօսք եղած չէ Վուլքովիչն սպանելու համար։ Խրիսթօ թէեւ մէկ քանի օր յետոյ իմացեր է թէ Վուլքովիչ վիրաւորուեր է, սակայն չը գիտեր թէ հեղինակն ո՛վ է։

Խրիսթօի նախապէս ուրանալն և յետոյ բազմաթիւ ապացոյցներու առջեւ տկարանալով խոստովանելն ծառայած է ճշմարտութիւնն երեւան հանելու։

Մէրճան եւս հարցաքննուելով բոլորովին ուրացած եւ յայտարարած է թէ Վուլքովիչն սպանելու համար իրեն ու Խրիսթօյի միջեւ բնաւ ո և է խօսակցութիւն մը տեղի ունեցած չէ, թէ Նաումի հետ բնաւ տեսնուած չէ և թէ ստակ ալ առած չէ։ Սակայն Խրիսթօէն զատ, մսավաճառ Տիմիթրիի կինն Մարիա՝ երդմամբ հաստատած է թէ Նաումի Կ. Պոլիս գտնուած պահուն Մէրճան երկու անգամ ի Խասքէօյ մսավաճառ Տիմիթրիի տունը գնացեր եւ տեսնուեր է Նաումի ու Խրիսթօի հետ։ Հարցաքննիչ դատաւորաց ուշադրութիւնը գրաւած է Մէրճանի՝ այս տեսակցութիւնն ուրանալն, տեսակցութիւն որ հաստատուելու աստիճանին հասած է։ Նոյնպէս կատարուած քննութեամբ և Մէրճանի հայրենակիցներէն բազմաթիւ վկաներու երդմամբ ըրած յայտարարութիւններէն հաստատուած է թէ Մէրճան Պուլկարիոյ մէջ աւազակութիւններ ըրած եւ Պոլսոյ մէջ ալ դատարկաշրջիկ կեանք մը անցուցած է։ Ի վերեւ նշանակեալ նամակի մը հատուածին մէջ յիշուած պուլկարին վիճակն ու ընթացքն, զոր Խրիսթօ գտած էր Տօքթ. Վուլքովիչն սպանելու համար, կը համապատասխանէ Մէրճանի դէմ ընթացքին, որ յետ քննութեան հաստատուած է։ Խրիսթօ մայրաքաղաքս վերադառնալէ յետոյ Կ. Պոլսէն նամակ մը գրկելով Նիքօլա Թիւֆէնքճիէֆի, ըսած է թէ Վուլքովիչը սպանելու համար մարդուն՝ միայն Վուլքովիչը ցոյց տալու գործը մնացած է։

Ասկից կը հետեւի որ բոլորովին սուտ է Խրիսթօի այն յայտարարութիւնը թէ, Պոլիս վերադառնալուն Մէրճանի առաջարկեր է սպանել Վուլքովիչն և թէ Մէրճան ընդունած չըլլալով, խնդիրը հաղորդեր է Նաումին։ Որովհետեւ հաստատուած է թէ Խրիսթօ գրած է Նաումի ըսելով որ Մէրճան ընդունած է իրեն առաջարկեալ ոճրագործութիւնն և թէ Վուլքովիչը ցոյց տալէ զատ ուրիշ գործ մը մնացած չէ։ Տօքթ. Վուլքովիչի քեռորդին՝ պուլկարական գործակատարութեան երկրորդ քարտուղար Վասիլ էֆէնտի իբրեւ անձնական դատախազ հաղորդած է Տօքթ. Վուլքովիչի մեռնելէ առաջ կրկին անգամ ըրած յայտարարութիւնը թէ զինքը վիրաւորողը՝ կարճահասակ, գիրուկ, բարակ պեխերով, գլուխը փէսով, հին բաճկոն մը հագած պուլկար մ'է, թէ դաշոյնն ինք վէրքէն հանելով նետած է, թէ այս դանակի կոթին վրայ հին լաթի կտոր մը փաթթուած է և այդ դանակ բաչաճիներու յատուկ և խիստ հաստ է և թէ վիրաւորողը պուլկար փախստական մ'է։ Գործածուած դանակը մէջտեղ չըլլալով՝ հարկ դատուած էր քննութիւնն աւելի եւս մանրամասնօրէն կատարել. հետեւաբար Պոլսոյ, Ղալաթիոյ և Թօփխանէի դանակագործներու արհեստապետները կոչելով Մէրճանի ու Խրիսթօի լուսանկարները իրենց յանձնուած են ցոյց տալու դանակագործ արհեստաւորներուն և հարցնելու համար թէ մօտաւոր հաշուով մէկ, երկու կամ երեք ամիս առաջ այդ լուսանկարներու տէրերն իրենց խանութ եկա՞ծ են ի նորոյ դանակ շինել կամ նորոգել և կամ սրել տալու համար և թէ այդ կարգի առուտուր մը եղա՞ծ է թէ ոչ։

Պոլսոյ կողմի դանակագործք պատասխանած են թէ այդ տեսակ մարդեր իրենց դիմած չեն. իսկ Ղալաթիոյ ու Թօփխանէի դանակագործներու արհեստապետն երկու մարդ առնելով եկած է։ Ասոնցմէ մին Իպրահիմ էֆէնտի դանակագործ ի Թօփխանէ, թիւ 485, Մէրճանի լուսանկարը ցոյց տալով յայտարարած է թէ այդ լուսանկարի տէրը մէկուկէս ամիս առաջ օր մը իւր խանութն երթալով իրեն ցոյց տուեր է դանակ մը ու սեւ կոթով արնավուտի զմելի մը սրելու համար։ Այդ դանակը հաներ է կռնակը գտնուած կողովի մը մէջ զետեղեալ պարկի մը ծակէն։ Այդ դանակ կարճ կոթ մը ունի եղեր, կոթին վրայ հին լաթ մը փաթթուած և երկաթէ կոթին մօտ երկու մատ լայնութեամբ սկսելով սրածայր կը վերջանայ և ծայրէն սկսելով չորս մատ տեղն ալ դաշոյնի ձեւ առած։ Վերջապէս մէկ թիզէն աւելի երկայնութեամբ բաչաճիի դանակ մ'է։ Սակարկութիւն ըլլալով, սրելու համար 60 փարա գին որոշուեր և դանակագործն զանոնք սրելով իրեն յանձներ է։ Ստակը ուրգելու ատեն այդ մարդ մեծ դանակը անգամ մը եւս սրելու համար դանակագործին տուեր է ըսելով որ այդ դանակին խիստ սուր ըլլալն անհրաժեշտ է։ Դանակագործն անգամ եւս դանակը սրելով մարդուն յանձներ եւ ստակը առեր է։ Մարդը դանակը հին լաթով մը փաթթելով կողովին մէջ գտնուած պարկը դրեր է։ Այդ մարդ նոյն պահուն հագած է եղեր ապաք խիստ հին բաճկոնի նման հագուստ մը եւ նոյնպէս խիստ հին «բօթուր» մը և Ղալաթիոյ կողմէ իւր խանութը գալով նորէն այդ կողմը գացեր է։

Մէրճան նոյն միջոցին բանտէն բերուելով հարցաքննիչ դատաւորի սենեակը մտնելու պահուն դանակագործը տեսնելով տակաւին իրեն չըսուած թէ ի՛նչ պատճառաւ կոչուած է, յուզմամբ ըսած է թէ ինք չէ, ինք սրել տուած չէ։ Դանակագործն եւս Մէրճանի երեսին ըսած է թէ դանակները բերող և սրել տուող մարդն նոյն ինքն է։ Մէրճանի ձերբակալուած պահուն վրայէն գտնուած Արնավուտի զմելին, որ պահուած էր և որուն համար Մէրճան խոստովանած էր թէ իրենն է, քննուած և հաստատուած է թէ դանակագործին նկարագրած զմելին է։ Նոյնպէս հաստատուած է թէ բաչաճիի այն դանակն, զոր Մէրճան սրել տուած էր և որ կորսուած է, բոլորովին նման է այն ձեւին զոր նկարագրած էր Տօքթ. Վուլքովիչի քեռորդի Վասիլ էֆէնտին։

Մէրճան միանգամայն ըսած էր թէ Տօքթ. Վուլքովիչի սպանուած գիշերն ինք ի Գասըմ Փաշա հէլվաճը Բէթրօի սենեակը հիւր էր, սակայն Բէթրօի և իւր ընկերաց յետ երդման ըրած յայտարարութիւնը հերքած է Մէրճանի այդ ըսածը։ Նոյնպէս Մէրճան չէ կրցած ցոյց տալ թէ նոյն գիշերն ո՛ւր կը գտնուէր։

Արդ, թէ՛ վերոգրեալ և թէ ուրիշ ապացոյցներով հաստատուած է թէ Մէրճան հեղինակն է այդ ոճրին և Խրիսթօ ալ՝ իւր մեղսակիցը։

Հարցաքննիչ դատաւորը այդ առթիւ հարկ եղած որոշմնագիրը պատրաստելու վրայ ըլլալով, Եղեռնադատ ատեանն ի մօտոյ պիտի սկսի զբաղիլ այդ խնդրով։

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ
ԲԵՐԱՅԻ

Նոր Թատրոնի տնօրէնութիւնն այս գիշերուան համար արտասովոր չքեղ ներկայացում մը կազմակերպած է ի նպաստ Օր. Էօժէնի Վիօլէի, ֆրանսական խումբին գըլխաւոր երգչուհւոյն որ իրաւունք Բերայի հասարակութեան քաջալերանաց։ Սոյն ներկայացման համար որոշեալ խաղն է՝

ՄԻՆԵՕՆ (MIGNON)

որուն գլխաւոր դերերն ստանձնած են Պ. Տէրէմս և Օր. Վիօլէ։ Առաջին միջնարարին երկու արուեստագէտք պիտի երգեն «Միրէյլի» մէկ եղանակը։

«Ֆլավեան» շոգենաւը, Նաւապետ Բրիօր, կը սպասուի Լիվրբուլէ դէպի 9 ամսոյս։

Գ. Ֆէլը Ֆլավեան շոգ. ընկ.
ԷՏ. ԼԱՖՈՆՏԷՆ

ԱԶԴ.—Երիտասարդ մը կ'ուզուի որ ունենայ խիստ մաքուր գիր և գիտնայ լաւ թուաբանութիւն։ Ըստ բաւականին ալ ֆըրանսերէն և հայերէն։ Դիմել լրագրոյս խմբագրատունը։ 2—4

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՅԱՒԵԼԵԱԼ ԵՒ ՃՈԽԱՑԵԱԼ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ
ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
(Ի պէտս Թրքախօս Հայոց)
ԳՈՐԾ ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆԻ

Վաւերացեալ Կրթական Խորհրդոյ Եւ Ազգ. Ուսումնական Խորհրդէ
